


**1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (առևտրի շրջանառությունը և ծառայությունների ծավալը)

	2006թ. հունվար-հունիս		Ընդհանուրի նկատմամբ, %	
	Ընդամենը, մլն. դրամ	2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2005թ.	2006թ.
Առևտրի շրջանառությունը և ծառայությունների ծավալը, ընդամենը	635920.3	117.3	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
Առևտրի շրջանառությունը, ընդամենը	431110.4	116.2	69.4	67.8
<i>դրանից՝</i>				
ավտոմեքենաների առևտուրը ¹	32673.4	152.5	3.7	5.1
մանրածախ առևտրի շրջանառությունը	320727.5	112.1	53.5	50.4
Ծառայությունների ծավալը	204809.9	121.1	30.6	32.2

Սպառողական շուկայում առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի տեսակարար կշիռներն ըստ եռամսյակների

(%)




2006թ. հունվար-հունիսին 2005թ. հունվար-հունիսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, զրանցվել է սպառողական շուկայի ծավալի 17.3% աճ:

¹ Սույն ցուցանիշը ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

Մանրածախ առևտուր

2006թ. հունվար-հունիսին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 320727.5 մլն. դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 12.1%-ով: 2006թ. հունիսին մայիսի համեմատությամբ մանրածախ առևտրի շրջանառությունը, համադրելի գներով, կազմել է 102.1%:

ՀՀ մանրածախ առևտրի ֆիզիկական ծավալի ինդեքսները 2006թ. հունվար-հունիսին, 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, համադրելի գներով (%)



ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունը


	2006թ. հունվար-հունիս		Ընդհանուրի նկատմամբ, %
	Շրջանառությունը, մլն. դրամ	2005թ հունվար-հունիսի նկատմամբ, համադրելի գներով %	
Մանրածախ առևտուր, ընդամենը	320727.5	112.1	100.0
<i>այդ թվում՝</i>			
խանութների	161228.0	119.5	50.2
սպառողական ապրանքների շուկաների	88099.7	103.1	27.5
գյուղատնտեսական արտադրանքի շուկաների	9709.2	108.2	3.0
կրպակների	21436.2	72.5	6.7
առևտրի այլ օբյեկտների	40254.4	148.3	12.6

2006թ. հունվար-հունիսին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 77.7% (249327.7 մլն.դրամ): Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:

Խանութների և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի տեսակարար կշիռը մանրածախ առևտրի շրջանառությունում ըստ ՀՀ մարզերի, 2006թ. հունվար-հունիսին

	Ընդամենը	այդ թվում՝										
		ք.երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Խանութների և սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	249327.7	226269.6	1253.8	2339.8	1922.2	1727.1	3886.1	4693.8	2962.6	1242.3	1204.0	1826.4
այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	77.7	81.4	79.6	66.4	47.7	73.2	54.5	48.8	45.9	38.8	82.0	54.2

Մանրածախ առևտրի շրջանառությունն ըստ ձևավորման աղբյուրների, ՀՀ մարզերով, 2006թ. հունվար-հունիսին



Մանրածախ առևտրի շրջանառության դինամիկան ըստ ձևավորման աղբյուրների, 2006թ. հունվար-հունիսին


	Շրջանառությունը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %				
		խանութներ	սպառողական ապրանքների շուկաներ	գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	կրպակներ	առևտրի այլ օբյեկտներ
Հունվար	42401.7	41.6	34.5	3.9	8.6	11.4
Հունվար-փետրվար	91130.5	42.5	32.9	3.9	7.7	13.0
Հունվար-մարտ	148281.9	48.6	28.0	3.1	7.2	13.1
Հունվար-ապրիլ	202347.5	49.4	27.4	3.0	7.0	13.2
Հունվար-մայիս	261389.9	50.3	27.1	3.1	6.8	12.7
Հունվար-հունիս	320727.5	50.2	27.5	3.0	6.7	12.6

Մանրածախ առևտրի օբյեկտների քանակը և առևտրի շրջանառությունը
ըստ ՀՀ մարզերի, 2006թ. հունվար-հունիսին

	Ընդամենը		այդ թվում՝									
	օբյեկտների քանակը, միավոր	առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	խանութներ		սպառողական ապրանքների շուկաներ		գյուղատնտեսական շուկաներ		կրպակներ		առևտրի այլ օբյեկտներ	
			քանակը, միավոր	շրջանառությունը, մլն. դրամ	քանակը, միավոր	շրջանառությունը, մլն. դրամ	քանակը, միավոր	շրջանառությունը, մլն. դրամ	քանակը, միավոր	շրջանառությունը, մլն. դրամ	քանակը, միավոր	շրջանառությունը, մլն. դրամ
ք. Երևան	7931	277998.3	4921	144751.8	24	81517.8	11	4753.5	2839	13463.4	136	33511.8
Արագածոտն	211	1575.3	90	1148.0	3	105.8	4	62.3	101	112.5	13	146.7
Արարատ	686	3521.8	458	1911.8	4	428.0	3	55.8	202	697.9	19	428.3
Արմավիր	449	4032.0	76	662.8	3	1259.4	2	1192.5	358	366.3	10	551.0
Գեղարքունիք	380	2357.9	166	916.8	7	810.3	3	127.1	193	154.1	11	349.6
Լոռի	1137	7135.9	338	2202.5	4	1683.6	4	575.8	775	2284.9	16	389.1
Կոտայք	1206	9610.0	321	4057.8	7	636.0	4	60.0	854	1482.5	20	3373.7
Շիրակ	776	6454.5	404	2258.4	8	704.2	2	2237.6	347	832.0	15	422.3
Սյունիք	429	3205.7	132	1021.5	2	220.8	3	193.1	280	1108.8	12	661.5
Վայոց ձոր	188	1467.6	122	1167.5	1	36.5	1	18.5	59	159.2	5	85.9
Տավուշ	812	3368.5	414	1129.1	2	697.3	2	433.0	366	774.6	28	334.5
Ընդամենը	14205	320727.5	7442	161228.0	65	88099.7	39	9709.2	6374	21436.2	285	40254.4

ՀՀ մարզերին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունները հիմնականում պայմանավորված են առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, առևտրի շրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

Առևտրի շրջանառության կառուցվածքը ըստ ՀՀ մարզերի, 2006թ. հունվար-հունիսին



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության 86.6%-ը (277998.3 մլն.դրամ) ապահովել են ք.երևանի մանրածախ առևտրի օբյեկտները, որը բացատրվում է վերը նշված գործոններով և այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք մարզերի (հիմնականում ք.երևանին մոտ գտնվող մարզերի) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև ք.երևանի առևտրի օբյեկտներում:

ՀՀ մանրածախ առևտրում պահպանվել է խանութների միջոցով իրականացվող առևտրի գերակայության միտումը: 2006թ. հունվար-հունիսին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության 50.2%-ը (161228.0 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով:

Ըստ վիճակագրական հաշվետվությունների տվյալների, հանրապետությունում խանութների 46.1%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 42.8%-ը՝ ոչ պարենային և 11.1 %-ը՝ խառը ապրանքների վաճառքով:

Խանութների քանակի բաշխվածությունը (պարենային, ոչ պարենային, խառը) ՀՀ մարզերով, 2006թ. հունվար-հունիսին

(%)




Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառությունը ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին

	Խանութների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	Առևտրի շրջանառության տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	7442	29304	161228.0	100.0
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	6403	12516	47046.8	29.2
6-15 մարդ (փոքր)	811	6927	31702.1	19.7
16-30 մարդ (միջին)	148	3160	16497.3	10.2
31 և ավելի մարդ (խոշոր)	80	6701	65981.8	40.9

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված խանութների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր խանութները՝ 86.0%: Հարկ է նշել, որ դրանց առևտրի շրջանառությունը կազմել է 29.2%, այն դեպքում, երբ խանութների ընդհանուր քանակում 1.1%-ը կազմող խոշոր խանութների միջոցով իրականացված առևտրի շրջանառությունը կազմել է 40.9%:

Խանութների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին (%)



Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառությունն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2006թ. հունվար-հունիսին

	Առևտրի շրջանառությունը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	144751.8	36949.3	25.5	27461.9	19.0	14589.1	10.1	65751.5	45.4
Արագածոտն	1148.0	311.4	27.1	836.6	72.9	-	-	-	-
Արարատ	1911.8	1631.0	85.3	274.2	14.3	6.6	0.4	-	-
Արմավիր	662.8	475.9	71.8	170.6	25.7	16.3	2.5	-	-
Գեղարքունիք	916.8	844.6	92.1	4.9	0.6	26.1	2.8	41.2	4.5
Լոռի	2202.5	1525.7	69.2	521.0	23.7	155.8	7.1	-	-
Կոտայք	4057.8	1899.5	46.8	1218.0	30.0	940.3	23.2	-	-
Շիրակ	2258.4	1282.6	56.8	703.1	31.1	97.6	4.3	175.1	7.8
Սյունիք	1021.5	662.8	64.9	195.9	19.2	162.8	15.9	-	-
Վայոց ձոր	1167.5	601.4	51.5	49.4	4.2	502.7	43.1	14.0	1.2
Տավուշ	1129.1	862.6	76.4	266.5	23.6	-	-	-	-
Ընդամենը	161228.0	47046.8	29.2	31702.1	19.7	16497.3	10.2	65981.8	40.9

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները, որոնցից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական գնահատականի հիման վրա, 2006թ. հունվար-հունիսին առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 88099.7 մլն. դրամ, որը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 103.1%:


Սպառողական ապրանքների շուկաների քանակը և առևտրի շրջանառությունը ըստ ՀՀ մարզերի, 2006թ. հունվար-հունիսին

Մարզեր	Քանակը, միավոր	Շրջանառությունը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
			պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	24	81517.8	12.4	87.6
Արագածոտն	3	105.8	-	100.0
Արարատ	4	428.0	-	100.0
Արմավիր	3	1259.4	29.0	71.0
Գեղարքունիք	7	810.3	20.9	79.1
Լոռի	4	1683.6	49.2	50.8
Կոտայք	7	636.0	21.9	78.1
Շիրակ	8	704.2	9.9	90.1
Սյունիք	2	220.8	-	100.0
Վայոց ձոր	1	36.5	77.5	22.5
Տավուշ	2	697.3	34.2	65.8
ԸՆԴԱՄԵՆՆՆ	65	88099.7	13.5	86.5

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 65 սպառողական ապրանքների շուկաներից 47-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում. ք. Երևանի 24 շուկաներից՝ 18-ը, Շիրակի մարզում՝ 8 շուկաներից 7-ը, Գեղարքունիքի մարզում 7-ից՝ 6-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում՝ 7-ից 3-ը, Արագածոտնի, Արարատի և Սյունիքի մարզերում գործող սպառողական ապրանքների շուկաները մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված հանրապետության սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառությունում ոչ պարենային ապրանքների մեծ տեսակարար կշիռը (86.5%):

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի

(%)




Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի շրջանառությունն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին

	Շուկաների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	Առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	65	912	88099.7	100.0
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	31	92	5037.0	5.7
6-15 մարդ (փոքր)	23	213	16874.9	19.2
16-30 մարդ (միջին)	4	81	1490.4	1.7
31 և ավելի մարդ (խոշոր)	7	526	64697.4	73.4

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակն ունի հետևյալ բաշխվածությունը, գերփոքր՝ 1137, փոքր՝ 2605, միջին՝ 385 և խոշոր՝ 4937 մարդ:

Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին

(%)



Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի շրջանառությունն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 37 մարզերով, 2006թ. հունվար-հունիսին


	Առևտրի շրջանառությունը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	81517.8	3247.1	4.0	14346.2	17.6	-	-	63924.5	78.4
Արագածոտն	105.8	105.8	100.0	-	-	-	-	-	-
Արարատ	428.0	312.6	73.0	115.4	27.0	-	-	-	-
Արմավիր	1259.4	-	-	486.5	38.6	-	-	772.9	61.4
Գեղարքունիք	810.3	31.9	3.9	690.2	85.2	88.2	10.9	-	-
Լոռի	1683.6	441.9	26.2	-	-	1241.7	73.8	-	-
Կոտայք	636.0	396.8	62.4	239.2	37.6	-	-	-	-
Շիրակ	704.2	305.4	43.4	398.8	56.6	-	-	-	-
Սյունիք	220.8	195.5	88.5	25.3	11.5	-	-	-	-
Վայոց ձոր	36.5	-	-	36.5	100.0	-	-	-	-
Տավուշ	697.3	-	-	536.8	77.0	160.5	23.0	-	-
Ընդամենը	88099.7	5037.0	5.7	16874.9	19.2	1490.4	1.7	64697.4	73.4

Առևտրի այլ օբյեկտների¹ միջոցով իրականացվող առևտրի շրջանառությունն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին

	Օբյեկտների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	Առևտրի շրջանառության տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	285	2419	40254.4	100
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	177	388	1922.8	4.8
6-15 մարդ (փոքր)	80	733	3340.3	8.3
16-30 մարդ (միջին)	17	343	4427.5	11.0
31 և ավելի մարդ (խոշոր)	11	955	30563.8	75.9

Առևտրի այլ օբյեկտների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին

(%)



Առևտրի այլ օբյեկտների միջոցով իրականացվող առևտրի շրջանառությունն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2006թ. հունվար-հունիսին

Մարզեր	Առևտրի շրջանառությունը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	շրջանառությունը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	33511.8	1296.7	3.9	1523.8	4.6	2663.4	7.9	28027.9	83.6
Արագածոտն	146.7	50.3	34.3	96.4	65.7	-	-	-	-
Արարատ	428.3	99.7	23.3	227.1	53.0	101.5	23.7	-	-
Արմավիր	551.0	5.7	1.0	11.7	2.1	12.2	2.2	521.4	94.7
Գեղարքունիք	349.6	34.1	9.8	187.6	53.6	127.9	36.6	-	-
Լոռի	389.1	80.2	20.6	308.9	79.4	-	-	-	-
Կոտայք	3373.7	62.4	1.8	197.7	5.9	1099.1	32.6	2014.5	59.7
Շիրակ	422.3	31.8	7.5	30.0	7.1	360.5	85.4	-	-
Սյունիք	661.5	128.3	19.4	470.3	71.1	62.9	9.5	-	-
Վայոց ձոր	85.9	14.2	16.5	71.7	83.5	-	-	-	-
Տավուշ	334.5	119.4	35.7	215.1	64.3	-	-	-	-
Ընդամենը ՀՀ	40254.4	1922.8	4.8	3340.3	8.3	4427.5	11.0	30563.8	75.9

¹ Սույն ցուցանիշը վերաբերվում է շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի օբյեկտներին :

**Մանրածախ շուկայի համեմատական ակտիվությունն ըստ մարզերի,
2006թ. հունվար-հունիսին**

Մարզեր	Մշտական բնակչության թվաքանակը (միջինը), <i>հազ. մարդ</i>	Առևտրի շրջանառությունը, <i>մլն. դրամ</i>	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը, <i>դրամ</i>	Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ, %
ք.Երևան	1103.8	277998.3	251855.7	252.8
Արագածոտն	139.6	1575.3	11284.4	11.3
Արարատ	274.3	3521.8	12839.2	12.9
Արմավիր	279.3	4032.0	14436.1	14.5
Գեղարքունիք	239.4	2357.9	9849.2	9.9
Լոռի	283.2	7135.9	25197.4	25.3
Կոտայք	275.3	9610.0	34907.4	35.0
Շիրակ	281.3	6454.5	22945.3	23.0
Սյունիք	152.9	3205.7	20966.0	21.0
Վայոց ձոր	55.8	1467.6	26301.1	26.4
Տավուշ	134.4	3368.5	25063.2	25.2
Ընդամենը ՀՀ	3219.3	320727.5	99626.5	x

2006թ. հունվար-հունիսին պահպանվել է 2005թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված ք.Երևանի մանրածախ շուկայի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես. ք.Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2006թ. հունվար-հունիսին 2.5 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 9.9 – 35.0 % միջակայքում:

**Ապրանքային պաշարների փոփոխությունը մանրածախ առևտրում
և դրանց ապահովվածությունն օրերով, 2006թ. հունվար-հունիսին**

Ամիսներ	Ապրանքային պաշարներ, <i>մլն. դրամ</i>	Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով
2006թ. Հունվարի 1-ի դրությամբ	62132.7	49
Փետրվարի 1-ի դրությամբ	49797.4	83
Մարտի 1-ի դրությամբ	67865.7	87
Ապրիլի 1-ի դրությամբ	53686.2	56
<i>I եռամսյակի միջինը</i>	<i>58524.2</i>	<i>58</i>
Մայիսի 1-ի դրությամբ	54098.4	62
Հունիսի 1-ի դրությամբ	57273.1	61
Հուլիսի-ի դրությամբ	56925.5	63
<i>II եռամսյակի միջինը</i>	<i>56365.5</i>	<i>62</i>

2006թ. հուլիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի գործող օբյեկտներում կազմել են 56925.5 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարների ապահովվածությունը՝ 63 օր:

Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները
2006թ. հունիսի 1-ի դրությամբ և դրանց ապահովվածությունն օրերով

	Ընդամենը ՀՀ	ըստ մարզերի										
		ք.Երեվան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Ապրանքային պաշարները, մլն. դրամ	56925.5	51187.1	239.8	323.7	117.8	279.5	622.2	2261.7	769.9	309.2	424.8	389.8
Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով	63	64	70	28	20	43	38	89	54	36	68	54

Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով հանրապետության միջինից բարձր է Կոտայքի (89 օր), Արագածոտնի (70 օր), Վայոց ձորի (68 օր) մարզերում և ք.Երևանում (64 օր):

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2006թ. հունվար-հունիսին դրանցում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր մանրածախ առևտրի շրջանառության 3.0%-ը կամ 9709.2 մլն. դրամը¹:

¹ Ցուցանիշը չի ներառում գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների առևտրի շրջանառությունը: